ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎ 74 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Աշխատանքային նախագծով մշակվել է հետևյալը.

- Բազմաբնակարան շենքի տանիքի փայտե կոնստրուցիաների և տանիքածածկույթի քանդման և վերակառուցման աշխատանքներ՝ նոր և հին փայտանյութով և նոր տանիքածածկույթով:

<u>Տանիքի հիմնանորոգման աշխատանքեր.</u>

Հարկ է նշել, որ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյալ մասնաշենքի տանիքի փայտե կոստրուկցիաները մասամբ քայքայված են, բացակայում են հակահրդեհային և հականեխիչ ծածկույթները: Երկարատև շահագործման հետևանքով մասամբ կորցրել են կրողունակությունը և ցանկալի չեն հետազայում որպես կրող կոնստրուկցիաներ օգտագործելու համար: Տախտակամածը և կավարամածը իրականացված է 20-30մմ տախտակներով՝ որոշ մասով դեֆորմացված է, և ոչ պիտանի շահագործման: Տանիքածածկույթը ազբոհերձաքարից է, մասամբ քայքայված, մասամբ էլ ջարդված: Նախագծով նախատեսված է փայտե կոնստրուկցիաների մասամբ փոխարինում նոր փայտանյութով, հականեխիչ և հակահրդեհային շերտի պատում, նոր տանիքածածկույթի տեղադրում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից, ինչպես նաև ջրահեռացման ձոռերի, ձագարների և խողովակների տեղադրում: Պարապետի նորոգված ճաղաշարի մոնտաժում: Նոր տանիքածածկույթն իրականացնելիս գոյություն ունեցող փայտանյութից առանձնացնել պիտանի փայտը, համապատասխան մշակումից հետո օգտագործել որպես հորիզոնական կապ և ծայրակցորդ:

Նախագծում ներկայացված են լուսանկարներ գոյություն ունեցող տանիքի փաստացի վիճակի վերաբերյալ:

Տանիքի ապամոնտաժումը սկսելուց առաջ անհրաժեշտ է տարանջատել անվտանգության գոտիները, բացառել կողմնակի անձանց մուտքը շին հրապարակի տարածք, ամբողջությամբ հոսանքազրկել շին հրապարակի բոլոր էլեկտրական գծերը, ապամոնտաժման աշխատանքներում ներգրավված բոլոր անձանց անցկացնել անվտանգության կանոնների դասընթաց:

Շինարարական աշխատանքներն իրականացնել կազմակերպությունների միջոցով:

Պահանջվող լիցենզիա՝ բնակելի, հասարակական և արտադրական:

Պահանջվող մեքենա մեխանիզմներ՝ ավտոկռունկ 1հատ, բեռնատար մեքենա 1հատ:

Օգտագործվող շինարարական նյութերին ներկայացվող պահանջներ՝ երաշխիքային ժամկետ 10 տարի: